Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդում
«28 » նոյեմբերի 2025 թ.
(արձանագրություն N 5)

Վավերացնում եմ՝
ռեկտոր _____ Հ. Զաքոյան
«28 » նոյեմբերի 2025թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգի նպատակն է որոշել Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի (այսուհետ՝ ՀԱԱՀ) համակարգի գիտական և ճարտարագիտատեխնիկական աշխատողների մասնագիտական պատրաստվածության աստիճանը և նշված աշխատողների մասնագիտական որակի համապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին, առաջնորդվելով նրանց գիտական և գիտատեխնիկական գործունեության օբյեկտիվ գնահատմամբ՝ ելակետ ունենալով ՀՀ կառավարության կողմից հաստատված գնահատման նվազագույն չափանիշները:

1.2. Կանոնակարգը մշակված է, հիմք ունենալով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը, ՀՀ Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2298-Ն որոշումը, ՀԱԱՀ-ի կանոնադրությունը, ՀԱԱՀ-ի 2020-2024թթ ռազմավարական պլանը:

1.3. Կանոնակարգով սահմանվում են հետևյալ գիտական և ճարտարագիտատեխ-նիկական պաշտոնների համապատասխանության չափորոշիչները և դրանց ատեստա-վորման գործընթացը.

1) գիտական պաշտոններ՝

ա. կրտսեր գիտաշխատող՝ Գ1,

բ. գիտաշխատող՝ Գ2,

գ. ավագ գիտաշխատող՝ Գ3,

դ. առաջատար գիտաշխատող՝ Գ4,

ե. գլխավոր գիտաշխատող՝ Գ5,

զ. պատվավոր առաջատար գիտաշխատող՝ ՊԳ1,

է. պատվավոր գլխավոր գիտաշխատող՝ ՊԳ2.

ը. գիտական ստորաբաժանման ղեկավար (լաբորատորիայի վարիչ, բաժնի վարիչ, սեկտորի վարիչ, բաժանմունքի ղեկավար/վարիչ, կենտրոնի ղեկավար և այլն)՝ Ղ2.

2) ճարտարագիտատեխնիկական պաշտոններ՝

ա. լաբորանտ՝ Լ1,

բ. ավագ լաբորանտ՝ Լ2,

գ. ճարտարագետ՝ Ճ1,

դ. ավագ ճարտարագետ՝ Ճ2:

2. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Ատեստավորումն անցկացվում է աշխատողի գիտական և գիտատեխնիկական գործունեության գնահատման հիման վրա՝ համաձայն տվյալ պաշտոնը բնորոշող չափանիշների (հավելված 1):

2.2 Գիտական և ճարտարագիտատեխնիկական աշխատողների ատեստավորումն անց է կացվում առնվազն 5 տարին մեկ անգամ:

2.3 Ատեստավորման անցկացման ժամանակացույցը (հավելված 2) սահմանվում է ՀԱԱՀ ռեկտորի (այսուհետ՝ Ռեկտոր) հրամանով, և ատեստավորման ենթակա աշխատակիցները դրա մասին տեղեկացվում են ատեստավորման անցկացման մեկնարկից առնվազն մեկ ամիս առաջ (հավելված 3):

2.4 Ատեստավորումն անցկացնելու համար Ռեկտորի հրամանով ստեղծվում են համապատասխան բնագավառի, որպես կանոն, գիտության ոլորտում նշանակալի ավանդ ունեցող յոթ գիտնականներից բաղկացած ատեստավորման հանձնաժողովներ (այսուհետ՝ Հանձնաժողով), նշանակվում է Հանձնաժողովի նախագահ և քարտուղար:

2.5 Հանձնաժողովի կազմում չեն կարող ընդգրկվել որակավորման ենթակա գիտական աշխատողները, բացառությամբ Հանձնաժողովի քարտուղարի, ով Հանձնաժողովում ունի բացառապես գործավարական լիազորություններ:

2.6 Ատեստավորումն անցկացվելուց առնվազն 15 օր առաջ Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովին է ներկայացնում ատեստավորվող աշխատողի վերաբերյալ հետևյալ տեղեկատվական նյութերը (հավելված 4)՝

1) անմիջական ղեկավարի կարծիքն իր մասին, այդ թվում, տարակարգի փոփոխության պարագայում՝ առաջարկվող տարակարգին համապատասխան որակական չափանիշներին համապատասխանության հիմնավորումները (հավելված 5).

2) ատեստավորման նախորդ գործընթացից հետո ընկած ժամանակահատվածում հրատարակված գիտական աշխատությունների ցանկը և գիտական գործունեությանը վերաբերող այլ փաստական նյութեր, որոնք վերցվում են գիտության ոլորտի կառավարման միասնական տեղեկատվական համակարգից (հավելված 6).

3) որակական չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր կամ այլ հավաստող նյութեր.

4) նախորդ ատեստավորման թերթիկը (առկայության դեպքում).

5) հերթական ատեստավորման թերթիկը՝ երկու օրինակից (հավելված 7):

2.7 Հանձնաժողովի նիստին մասնակցում է ատեստավորվողի անմիջական ղեկավարը խորհրդակցական ձայնի իրավունքով:

2.8 Հանձնաժողովի նիստին ատեստավորվողի չներկայանալու դեպքում Հանձնաժողովը կարող է ատեստավորումն անցկացնել նրա բացակայությամբ:

2.9 Հանձնաժողովն իրավասու է անցկացնելու ատեստավորում, եթե նիստին մասնակցում է Հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ը:

2.10 Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են փակ գաղտնի քվեարկությամբ և ձայների պարզ մեծամասնությամբ ու ամրագրվում են ատեստավորման քվեաթերթիկում

(հավելված 7): Ձայների հավասարության դեպքում որոշումն ընդունվում է ատեստավորվողի օգտին:

2.11 Հանձնաժողովն ատեստավորվողին տալիս է «Համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին», «Չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին», «Համապատասխանում է իր զբաղեցրած պաշտոնից ավելի բարձր պաշտոնի» գնահատականներից մեկը:

2.12 «Համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին» գնահատականի պարագայում Հանձնաժողովը տալիս է աշխատողի զբաղեցրած պաշտոնի պահպանման երաշխավորություն:

2.13 «Չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին» գնահատականի պարագայում Հանձնաժողովը տալիս է աշխատողի պաշտոնի իջեցման, իսկ համապատասխան պաշտոնի բացակայության դեպքում պաշտոնից ազատելու մասին երաշխավորություններ:

2.14 «Համապատասխանում է իր զբաղեցրած պաշտոնից ավելի բարձր պաշտոնի» գնահատականի պարագայում Հանձնաժողովը տալիս է աշխատողի պաշտոնի բարձրացման երաշխավորություն:

2.15 Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն ու Հանձնաժողովի երաշխավորությունները և հիմնավորումները գրանցվում են նիստի արձանագրության մեջ և ատեստավորման թերթիկում, որոնք ստորագրում են Հանձնաժողովի նախագահը և տվյալ նիստին ներկա Հանձնաժողովի բոլոր անդամները (հավելված 8):

2.16 Ատեստավորման արդյունքներն ու Հանձնաժողովի երաշխավորությունները հանձնաժողովի նիստից հետո՝ հինգ օրվա ընթացքում, ներկայացվում են Ռեկտորին:

2.17 Հանձնաժողովի երաշխավորությունը կարող է բողոքարկվել ատեստավորվողի կողմից երաշխավորության մասին ծանուցվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: Բողոքը ներկայացվում է Ռեկտորին և Հանձնաժողովին գրավոր կամ էլեկտրոնային եղանակով: Բողոքը Հանձնաժողով ներկայացնելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովը քննում է այն և սույն կարգի 2.9-րդ կետով նախատեսված եղանակով ընդունում վերջնական որոշում: Աշխատողի ատեստավորման կարգի և գնահատման չափանիշների խախտման դեպքում ատեստավորման արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով:

2.18 Ռեկտորը, Հանձնաժողովի երաշխավորության հիման վրա, իր լիազորությունների շրջանակում կայացնում է պաշտոնի բարձրացման, իջեցման կամ պաշտոնից ազատման, ինչպես նաև պաշտոնային դրույքաչափի փոփոխման ու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հավելավճարի տրամադրման որոշում:

2.19 Ատեստավորման համար ներկայացված փաստաթղթերի փաթեթի բնօրինակը կցվում է ատեստավորվողի անհատական գործին, իսկ Հանձնաժողովի երաշխավորության պատճենը տրվում է ատեստավորվողին:

2.20 Ատեստավորման ենթակա չեն հղիության և ծննդաբերության ու մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել, ինչպես նաև այն գիտական և ճարտարագիտատեխնիկական աշխատողները ովքեր ներգրավված չեն ՀԱԱՀ գիտական և գիտատեխնիկական

գործունեության բազային ֆինանսավորման ծրագրի հաստիքացուցակում և որոնց հետ կնքված է ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2.21 Հղիության և ծննդաբերության ու մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդից վերադարձած աշխատողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո՝ ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե վերջիններս ավելի վաղ ատեստավորվելու ցանկություն չեն հայտնել:

2.22 Պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձած աշխատողները ենթակա են ատեստավորման զինվորական ծառայությունից վերադառնալուց հետո՝ ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե վերջիններս ավելի վաղ ատեստավորվելու ցանկություն չեն հայտնել:

3. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

3.1 Սույն կանոնակարգի 2.1-րդ կետում նշված (հավելված 1) ատեստավորման գնահատման չափանիշներն այն քանակական և որակական նվազագույն պահանջներն են, որոնք ներկայացվում են տվյալ տարակարգը հայցող աշխատողին: Ատեստավորման գնահատման չափանիշները սահմանելիս հաշվի են առնվում նաև ՀԱԱՀ-ում գիտական պաշտոնների տարակարգի համար սահմանվող հավելյալ քանակական և որակական պահանջները:

3.2 Սույն կանոնակարգի 3.1-րդ կետում նշված ատեստավորման գնահատման չափանիշների քանակական նվազագույն պահանջների հաշվարկման համար հրապարակումները պետք է ընդգրկված լինեն միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (այսուհետ՝ ՄԳՇ)՝ Վեբ օֆ Սայնս (Web of Science™) հարթակի հիմնական շտեմարանում (Web of Science Core Collection) կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում որպես հոդված (Article), ակնարկ (Review), նամակ (Letter), գիտաժողովի նյութ (Conference Paper, Proceedings Paper) կամ գրքի գլուխ (Book Chapter),

3.3 Կրտսեր գիտաշխատողի պաշտոնը կարող է զբաղեցնել այն անձը, ով՝

1) ունի ՀԱԱՀ-ում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան կամ մագիստրոսի (դիպլոմավորված մասնագետի) որակավորում.

2) բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագրերով առաջին ավարտական փաստաթուղթը (դիպլոմ) ստացել է առավելագույնը 20 տարի առաջ:

3.4 Կրտսեր գիտաշխատողը՝

1) պատասխանատու կատարողի ղեկավարությամբ, գիտական թեմայի առանձին մասերի շրջանակներում իրականացնում է գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ (այսուհետ՝ հետազոտություններ) կամ փորձարարական մշակումներ (այսուհետ՝ մշակումներ)՝ համաձայն ոլորտում գործող մեթոդաբանության.

2) տիրապետում է գիտության համապատասխան ոլորտի իրավական կարգավորումներին, էթիկայի նորմերին և անվտանգության կանոններին.

3) կատարում է տվյալ թեմայով գիտական և գիտատեխնիկական տեղեկատվության ուսումնասիրություն և հետազոտության իրեն հանձնարարված մասի վերաբերյալ կարողանում է իրականացնել առկա տեղեկատվության ամփոփում.

4) մասնակցում է գիտափորձերի, դաշտային հետազոտությունների կամ աշխատանքների իրականացմանը, կատարում է չափումներ, ուսումնասիրություններ, կազմում է վերջիններիս նկարագրությունը, կատարում է հետևություններ և մասնակցում է արդյունքների վերլուծությանը.

5) կարող է գործընկերներին բացատրել հետազոտության արդյունքները և դրանց արժեքավորությունը.

6) տեղեկացված է հանրապետության ագրարային ոլորտում իրականացվող պետական քաղաքականության հիմնական ուղղություններին:

3.5 Գիտաշխատողի պաշտոնը կարող է զբաղեցնել այն անձը, ով՝

1) ունի ՀԱԱՀ-ում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան կամ մագիստրոսի (դիպլոմավորված մասնագետի) որակավորում.

2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

3) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտություններով համահեղինակել է առնվազն չորս գիտական հրապարակում ՄԳՇ-ում:

3.6 Գիտաշխատողը՝

1) որպես պատասխանատու կատարող, իրականացնում է գիտական թեմայի շրջանակներում կատարվող հետազոտություններ, մշակումներ կամ ինքնուրույն փորձարկումներ.

2) մասնակցում է հետազոտությունների կամ մշակումների իրականացման մեթոդաբանությունների մշակման աշխատանքներին և ներկայացնում է առաջարկություններ դրանց գործնական կիրառման վերաբերյալ.

3) կատարում է տվյալ թեմայով գիտական և գիտատեխնիկական տեղեկատվության ուսումնասիրություն և վերլուծություն, իրականացնում է տեղեկատվության ամփոփում, տիրապետում է հետազոտության թեմային վերաբերող տեղեկատվությանը, հետազոտությունների կազմակերպման ժամանակակից մեթոդներին, հանդես է գալիս որպես հրապարակումների համահեղինակ.

4) իրականացնում է գիտափորձեր, դաշտային հետազոտություններ կամ աշխատանքներ, կատարում է չափումներ, կազմում է վերջիններիս նկարագրությունները, անում է հետևություններ և վերլուծում է ստացված արդյունքները.

5) գիտի իրականացվող հետազոտությունների ու մշակումների նպատակները և խնդիրները, կարող է ձևակերպել թեմայի շրջանակներում առանձին խնդիրներ, կարող է իրականացնել նոր և բարդ հասկացությունների քննական վերլուծություն, գնահատում և սինթեզ.

6) ունի մասնագիտության համակարգային գիտելիքներ և մասնագիտությանը վերաբերող մեթոդաբանությունների ու հետազոտական հմտություններ.

7) կարողանում է հաղորդակցվել գրախոսների հետ՝ բացատրելով հետազոտության արդյունքները և դրանց արժեքավորությունը.

8) կարող է աջակցել կրտսեր գիտաշխատողներին առավել արդյունավետ աշխատելու և իրենց հետազոտական առաջընթացում հաջողություններ գրանցելու համար.

9) ընդհանուր առմամբ իրազեկ է հանրապետության ագրոպարենային ոլորտի առկա խնդիրներին, տիրապետում է հանրապետության ագրոպարենային ոլորտում իրականացվող պետական ծրագրերի դրույթներին, դրանցում կիրառվող մեխանիզմներին: Առաջնություն է տրվում տեղական գիտական պարբերականներում ագրոպարենային ոլորտի հոդվածների առկայությանը:

3.7 Ավագ գիտաշխատողի պաշտոնը կարող է զբաղեցնել այն անձը, ով՝

1) ունի ՀԱԱՀ-ում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան.

2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն ութ տարվա աշխատանքային ստաժ.

3) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտություններով համահեղինակել է վեց հրապարակում ՄԳՇ-ում,

4) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտություններով ՄԳՇ-ում հրապարակումներից առնվազն երեքում հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ:

3.8 Ավագ գիտաշխատողը՝

1) ղեկավարում է առանձին թեմաների շրջանակներում հետազոտություններ կամ մշակումներ իրականացնող աշխատանքային խումբ՝ որպես պատասխանատու կատարող, և մասնակցում է առանձին հետազոտությունների և մշակումների իրականացմանը՝ որպես կատարող.

2) մշակում է հետազոտությունների կամ մշակումների իրականացման մեթոդաբանությունները, կազմում է դրանց ժամանակացույցը և կատարում է աշխատանքի բաշխում, սահմանում է իրականացվող հետազոտությունների ու մշակումների նպատակները և խնդիրները, մասնակցում է գիտական արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև հետազոտական ծրագրերի կազմմանը.

3) տիրապետում է առնվազն իր ղեկավարության տակ գտնվող թեմայի վերաբերյալ գիտական և գիտատեխնիկական ժամանակակից տեղեկատվությանը, կարողանում է

ձևակերպել ամփոփ տեղեկատվական նյութեր կամ հաշվետվություններ, հանդես է գալիս որպես հրապարակումների առաջատար հեղինակ.

4) կազմում է հետազոտական ծրագրեր, կազմակերպում է դրանց իրականացումը և արդյունքների ամփոփումը.

5) մասնակցում է աշխատողների պատրաստման և վերաորակավորման աշխատանքներին (սեմինարներին մասնակցություն, ավարտական կամ ինքնուրույն աշխատանքների ղեկավարում, դասավանդում, մենթորություն).

6) ըստ անհրաժեշտության, հանդես է գալիս իր մասնագիտության շրջանակներում որպես փորձագետ.

7) իր մասնագիտության և հարակից շրջանակներում կարողանում է վեր հանել հետազոտական խնդիրներ և հնարավորություններ.

8) Իրազեկ է հանրապետության ագրոպարենային ոլորտի առկա հիմնական խնդիրներին, տիրապետում է ագրարային պետական քաղաքականության հիմնական դրույթներին, իրականացվող հիմնական պետական ծրագրերի առանձնահատկություններին և կիրառվող մեխանիզմներին: Ընդհանուր ձևով կարող է առաջադրել ագրոպարենային ոլորտի գիտական լուծում պահանջող հիմնական խնդիրների շրջանակը: Ունի կարողություններ մասնակցելու ծրագրերի նախագծերի մշակմանը և եզրակացություններ տրամադրելու ագրոպարենային ոլորտի համապատասխան ծրագրերի նախագծերի վերաբերյալ: Առաջնություն է տրվում տեղական գիտական պարբերականներում ագրոպարենային ոլորտի հոդվածների առկայությանը.

9) ունի կարողություններ իր գործընկերների հետ կազմելու հետազոտական համագործակցային խմբեր (նաև միջազգային) և հայթայթել դրամաշնորհային միջոցներ ծրագրերի իրականացման համար:

3.9 Առաջատար գիտաշխատողի պաշտոնը կարող է զբաղեցնել այն անձը, ով՝

1) ունի ՀԱԱՀ-ում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան.

2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն 13 տարվա աշխատանքային ստաժ.

3) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտություններով համահեղինակել է առնվազն ութ հրապարակում ՄԳՇ-ում.

4) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտություններով ՄԳՇ-ում ընդգրկված հրապարակումներից առնվազն չորսում հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ.

5) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատ-

վածները) բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտություններով ՄԳՇ-ում ընդգրկված հրապարակումներից առնվազն չորսը ներառված են Սկիմագո Ջըրնըլ էնդ Քանթրի Ռենք (SCimago Journal & Country Rank) պորտալի ամսագրերի դասակարգման (այսուհետ՝ ամսագրերի դասակարգման) առնվազն երկրորդ քառորդում (Q2).

6) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) հանդիսացել է՝

ա. գիտական աստիճան ստացած առնվազն մեկ անձի ատենախոսության գիտական ղեկավար կամ,

բ. առնվազն 20 000 000 դրամ ընդհանուր ֆինանսական ծավալի գիտական դրամաշնորհի (դրամաշնորհների) ղեկավար կամ նախատեսված լինելու պարագայում՝ համաղեկավար:

3.10 Առաջատար գիտաշխատողը՝

1) ղեկավարում է հետազոտական թեմաներ կամ առաջադրանքներ, համակարգում է հետազոտությունները կամ մշակումներն իրականացնող աշխատանքային խմբի կամ խմբերի գործունեությունը, հետևում է աշխատանքի ընթացքին և համակարգում է համակատարողների աշխատանքները.

2) կազմում է համալիր հետազոտությունների իրականացման մեթոդաբանությունը, ինչպես նաև կազմակերպում է այդ հետազոտությունների համար անհրաժեշտ ռեսուրսների գույքագրումը և ձեռքբերումը: Անհրաժեշտության դեպքում, ապահովում է այլ կազմակերպությունների (այդ թվում՝ օտարերկրյա պետությունների) հետ աշխատանքը.

3) պատասխանատու է գիտական արդյունքների ամփոփման և միջազգային պարբերականներում հրատարակման, ինչպես նաև գիտական հարթակներում արդյունքների ներկայացումը կազմակերպելու համար, ունի ակտիվ գործնական կապեր և համագործակցություն իր ոլորտի միջազգային գործընկերների հետ.

4) առաջարկում և հիմնավորում է գիտական հետազոտությունների նոր ուղղությունները, ներկայացնում է առաջարկություններ հետազոտական աշխատանքների նախագծերի և ծրագրերի վերաբերյալ, կազմակերպում է նախագծերի մշակումը և պատշաճ ներկայացումը.

5) ամփոփում է հետազոտությունների արդյունքները, որոշում է դրանց կիրառության ոլորտները, այդ թվում՝ հանրայնացման տեսանկյունից.

6) տիրապետում է ագրարային պետական քաղաքականության հիմնական ուղղություններին, անհրաժեշտության դեպքում մասնակցում է այդ քաղաքականության մշակման աշխատանքներին: Իրազեկ է հանրապետության ագրոպարենային ոլորտի առկա հիմնական խնդիրներին, իրականացվող պետական ծրագրերի առանձնահատկություններին և կիրառվող մեխանիզմներին: Կարող է առաջադրել ագրոպարենային ոլորտի գիտական լուծում պահանջող հիմնական խնդիրների շրջանակը: Մասնակցում է ագրարային ոլորտի ծրագրերի նախագծերի մշակմանը և եզրակացություններ է տրամադրում ագրոպարենային ոլորտի համապատասխան

ծրագրերի նախագծերի վերաբերյալ: Առաջնություն է տրվում տեղական գիտական պարբերականներում ագրոպարենային ոլորտի հոդվածների առկայությանը.

7) տիրապետում է ագրոպարենային ոլորտի համապատասխան բնագավառում գիտության նվաճումների միջազգային լավագույն փորձին.

8) մասնակցում է աշխատողների պատրաստման և վերարտակավորման աշխատանքներին (վարում է դասընթացներ, սեմինարներ).

9) ըստ անհրաժեշտության, հանդես է գալիս իր մասնագիտությանը համապատասխան ոլորտի շրջանակներում որպես փորձագետ.

10) մասնակցում է կազմակերպության գիտական ուղղությունների քննարկմանը, ինչպես նաև ռազմավարական առաջնահերթությունների մշակմանը:

3.11 Գլխավոր գիտաշխատողի պաշտոնը կարող է զբաղեցնել այն անձը, ով՝

1) ունի ՀԱԱՀ-ում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան.

2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական 18 տարվա աշխատանքային ստաժ.

3) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտություններով համահեղինակել է առնվազն 16 հրապարակում ՄԳՇ-ում.

4) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտություններով ՄԳՇ-ում ընդգրկված հրապարակումներից առնվազն ութում հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ.

5) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտություններով ՄԳՇ-ում ընդգրկված հրապարակումներից առնվազն ութը ներառված են ամսագրերի դասակարգման առաջին քառորդում (Q1).

6) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) հանդիսացել է՝

ա. գիտական աստիճան ստացած առնվազն երկու անձանց ատենախոսության գիտական ղեկավար կամ,

բ. բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտությունների համար առնվազն 40 000 000 դրամ ընդհանուր ֆինանսական ծավալի գիտական դրամաշնորհի (դրամաշնորհների) ղեկավար կամ նախատեսված լինելու պարագայում՝ համաղեկավար, որից

առնվազն 20 000 000 դրամը ոչ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից:

3.12 Գլխավոր գիտաշխատողը՝

1) ղեկավարում է միջմասնագիտական հետազոտական թեմաներ կամ պետական կարևորության առաջադրանքներ, համակարգում է հետազոտությունները կամ մշակումներն իրականացնող աշխատանքային խմբերի գործունեությունը, հետևում է աշխատանքի ընթացքին և համակարգում է համակատարողների աշխատանքները.

2) առաջարկում և հիմնավորում է գիտական հետազոտությունների նոր ուղղությունները, որոնք ունեն հանրապետական կամ միջազգային նշանակություն, մշակում է հետազոտական աշխատանքների նախագծերի և ծրագրերի առաջարկությունները, կազմակերպում է նախագծերի կազմումը և պատշաճ ներկայացումը համապատասխան գերատեսչություններին, կարող է ձևակերպել հետազոտական բնագավառի ապագայի վերաբերյալ ռազմավարական հայեցակարգեր, հրապարակում է միջազգային բարձր ազդեցություն և նշանակություն ունեցող հոդվածներ և աշխատություններ.

3) կազմում է համալիր հետազոտությունների իրականացման մեթոդաբանությունը, ինչպես նաև կազմակերպում է այդ հետազոտությունների համար անհրաժեշտ ռեսուրսների գույքագրումը և ձեռքբերումը: Ապահովում է այլ կազմակերպությունների (այդ թվում՝ օտարերկրյա պետությունների) հետ աշխատանքը.

4) համակարգում է ՀԱԱՀ-ի և հանրապետության կամ օտարերկրյա պետությունների գիտական, գիտատեխնիկական կամ գիտաարտադրական կազմակերպությունների հետ համագործակցության ծրագրերը.

5) պատասխանատու է գիտական արդյունքների ամփոփման և միջազգային պարբերականներում հրատարակման, ինչպես նաև գիտական հարթակներում արդյունքների ներկայացումը կազմակերպելու համար, ունի ակտիվ գործնական կապեր և համագործակցություն իր ոլորտի միջազգային գործընկերների հետ.

6) մասնակցում է աշխատողների պատրաստման և վերաորակավորման աշխատանքներին (վարում է դասընթացներ, սեմինարներ, ղեկավարում հետբուհական աշխատանքներ, հանդես է գալիս հրավիրյալ դասախոսի կարգավիճակում).

7) մասնակցում է գլոբալ նշանակության հետազոտությունների ծրագրերի մշակման աշխատանքներին, մասնակցում է նման ծրագրերի իրականացմանը՝ ղեկավարելով առնվազն հայաստանյան կողմի աշխատանքները.

8) հանդիսանում է իր մասնագիտությանը համապատասխան ոլորտի շրջանակներում միջազգային ճանաչում ունեցող փորձագետ, իրականացնում է միջազգային նշանակալի ծրագրերի փորձաքննություն կամ փորձագիտական հանձնաժողովի մասնակից է.

9) մասնակցում է հանրապետության գիտական և գիտատեխնիկական առաջնահերթ և կարևորություն ներկայացնող ուղղությունների քննարկմանը.

10) ամփոփում է հետազոտությունների արդյունքները, որոշում է դրանց առավել լայն կիրառության ոլորտները, այդ թվում՝ հանրային բարիք ստեղծելու տեսանկյունից.

11) լիարժեք տիրապետում է ագրարային պետական քաղաքականության հիմնական ուղղություններին, անհրաժեշտության դեպքում մասնակցում է այդ քաղաքականության մշակման աշխատանքներին.

12) տիրապետում է ագրոպարենային ոլորտում իրականացվող պետական ծրագրերի առանձնահատկություններին և կիրառվող մեխանիզմներին: Կարող է առաջադրել ագրոպարենային ոլորտի գիտական լուծում պահանջող հիմնական խնդիրների բնութագիրը: Անհրաժեշտությունից ելնելով մասնակցում է ագրարային ոլորտի ծրագրերի նախագծերի մշակմանը և եզրակացությունների տրամադրմանը: Առաջնություն է տրվում տեղական գիտական պարբերականներում ագրոպարենային ոլորտի հոդվածների առկայությանը:

13) տիրապետում է ագրոպարենային ոլորտի համապատասխան բնագավառում գիտության նվաճումների միջազգային լավագույն փորձին և կարող է առաջադրել դրանց տեղայնացման հնարավորություններ.

14) նախաձեռնում է ՀԱԱՀ-ի միջազգային գործընկերության աշխարհագրության ընդլայնմանն ուղղված աշխատանքներ, նպաստում է ֆինանսական նոր միջոցների ներգրավմանը, միջազգային հետազոտական տիրույթում ՀԱԱՀ-ի դիրքերի ամրապնդմանը:

3.13 Պատվավոր առաջատար գիտաշխատողի պաշտոնը կարող է զբաղեցնել այն անձը, ով՝

1) ունի Հայաստանի Հանրապետությունում տարիքային կենսաթոշակի իրավունք.

2) վերջին տասը տարիների ընթացքում առնվազն հինգ տարի (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) զբաղեցրել է առաջատար գիտաշխատողի, գիտական խմբի ղեկավարի կամ գիտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոն.

3) վերջին տասը տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտություններով համահեղինակել է տասնչորս հրապարակում ՄԳՇ-ում, որից վեցը վերջին հինգ տարիների ընթացքում.

4) վերջին տասը տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտություններով ՄԳՇ-ում ընդգրկված հրապարակումներից առնվազն յոթը ներառված են ամսագրերի դասակարգման առնվազն երկրորդ քառորդում (Q2).

5) վերջին տասը տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտություններով ՄԳՇ-ում

ընդգրկված հրապարակումներից առնվազն յոթում հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ:

3.14 Պատվավոր առաջատար գիտաշխատողը՝

1) մասնակցում է աշխատողների պատրաստման և վերարտադրման աշխատանքներին (սեմինարներին մասնակցություն, դիպլոմային կամ կուրսային կամ ավարտական աշխատանքների ղեկավարում, դասավանդում, մենթորություն).

2) ըստ անհրաժեշտության, հանդես է գալիս իր մասնագիտության շրջանակներում որպես փորձագետ.

3) իր մասնագիտության և հարակից շրջանակներում կարողանում է վեր հանել հետազոտական խնդիրներ և հնարավորություններ.

4) ունի կարողություններ իր գործընկերների հետ կազմելու հետազոտական համագործակցային խմբեր (նաև միջազգային) և հայթայթել դրամաշնորհային միջոցներ ծրագրերի իրականացման համար.

5) մասնակցում է ՀԱԱՀ-ի գիտական ուղղությունների քննարկմանը, ինչպես նաև ռազմավարական առաջնահերթությունների մշակմանը,

6) իրազեկված է ագրարային քաղաքականության հիմնական ուղղությունների վերաբերյալ:

3.15 Պատվավոր գլխավոր գիտաշխատողի պաշտոնը կարող է զբաղեցնել այն անձը, ով՝

1) ունի Հայաստանի Հանրապետությունում տարիքային կենսաթոշակի իրավունք.

2) վերջին տասը տարիների ընթացքում առնվազն հինգ տարի զբաղեցրել է գլխավոր գիտաշխատողի կամ գիտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոն.

3) վերջին տասը տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտություններով համահեղինակել է քսանչորս հրապարակում ՄԳՇ-ում, որից ութը վերջին հինգ տարիների ընթացքում.

4) վերջին տասը տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտություններով ՄԳՇ-ում ընդգրկված հրապարակումներից առնվազն տասներկուսում, որից չորսում վերջին հինգ տարիների ընթացքում հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ.

5) վերջին տասը տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտություններով ՄԳՇ-ում ընդգրկված հրապարակումներից առնվազն տասներկուսը, որից չորսը վերջին հինգ

տարիների ընթացքում ներառված են ամսագրերի դասակարգման առնվազն առաջին քառորդում (Q1):

3.16 Պատվավոր գլխավոր գիտաշխատողը՝

1) առաջարկում և հիմնավորում է գիտական հետազոտությունների նոր ուղղությունները, ներկայացնում է առաջարկություններ հետազոտական աշխատանքների նախագծերի և ծրագրերի վերաբերյալ.

2) մասնակցում է աշխատողների պատրաստման և վերարտակավորման աշխատանքներին (սեմինարներին մասնակցություն, դիպլոմային կամ կուրսային կամ ավարտական աշխատանքների ղեկավարում, դասավանդում, մենթորություն).

3) ըստ անհրաժեշտության, հանդես է գալիս իր մասնագիտության շրջանակներում որպես փորձագետ.

4) իր մասնագիտության և հարակից շրջանակներում կարողանում է վեր հանել հետազոտական խնդիրներ և հնարավորություններ.

5) ունի կարողություններ իր գործընկերների հետ կազմելու հետազոտական համագործակցային խմբեր (նաև միջազգային) և հայթայթել դրամաշնորհային միջոցներ ծրագրերի իրականացման համար.

6) իրազեկված է ագրարային քաղաքականության հիմնական ուղղությունների վերաբերյալ.

7) մասնակցում է ՀԱԱՀ-ի գիտական ուղղությունների քննարկմանը, ինչպես նաև ռազմավարական առաջնահերթությունների մշակմանը:

3.17 Գիտական ստորաբաժանման ղեկավարի (լաբորատորիայի վարիչ, բաժնի վարիչ, սեկտորի վարիչ, բաժանմունքի ղեկավար/վարիչ, կենտրոնի ղեկավար և այլն) պաշտոնը կարող է զբաղեցնել այն անձը, ով՝

1) ունի ՀԱԱՀ-ում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան.

2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն յոթ տարվա աշխատանքային ստաժ.

3) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտություններով համահեղինակել է վեց հրապարակում ՄԳՇ-ում.

4) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտություններով ՄԳՇ-ում ընդգրկված հրապարակումներից առնվազն երեքում հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ:

3.18 Գիտական ստորաբաժանման ղեկավարը՝

1) ղեկավարում է հետազոտական թեմաները կամ առաջադրանքները, համակարգում է հետազոտությունները կամ մշակումներն իրականացնող խմբի կամ խմբերի

գործունեությունը, հետևում է աշխատանքի ընթացքին և համակարգում է համակատարողների աշխատանքները, ապահովում է իր ղեկավարած գիտական ստորաբաժանման բարձր արդյունավետությունը.

2) առաջարկում և հիմնավորում է գիտական հետազոտությունների նոր ուղղությունները, ներկայացնում է առաջարկություններ հետազոտական աշխատանքների նախագծերի և ծրագրերի վերաբերյալ, կազմակերպում է նախագծերի մշակումը և պատշաճ ներկայացումը.

3) կազմում է համալիր հետազոտությունների իրականացման մեթոդաբանությունը, ինչպես նաև կազմակերպում է այդ հետազոտությունների համար անհրաժեշտ ռեսուրսների գոյքագրումը և ձեռքբերումը: Անհրաժեշտության դեպքում, ապահովում է այլ կազմակերպությունների (այդ թվում՝ օտարերկրյա պետությունների) հետ աշխատանքը.

4) պատասխանատու է գիտական արդյունքների ամփոփման և միջազգային պարբերականներում հրատարակման, ինչպես նաև գիտական հարթակներում արդյունքների ներկայացումը կազմակերպելու համար, ունի ակտիվ գործնական կապեր և համագործակցություն իր ոլորտի միջազգային գործընկերների հետ.

5) կազմակերպում է աշխատողների ընտրության, պատրաստման և վերաորակավորման աշխատանքները (վարում է դասընթացներ, սեմինարներ, ղեկավարում հետբուհական աշխատանքներ) և, ըստ անհրաժեշտության, մասնակցում է այդ աշխատանքներին.

6) ըստ անհրաժեշտության, հանդես է գալիս իր մասնագիտությանը համապատասխան ոլորտի շրջանակներում որպես փորձագետ.

7) մասնակցում է ՀԱԱՀ-ի գիտական ուղղությունների քննարկմանը, ինչպես նաև ռազմավարական առաջնահերթությունների մշակմանը.

8) տիրապետում է ագրարային պետական քաղաքականության հիմնական ուղղություններին, անհրաժեշտությունից ելնելով մասնակցում է այդ քաղաքականության մշակման աշխատանքներին: Առաջնություն է տրվում տեղական գիտական պարբերականներում ագրոպարենային ոլորտի հոդվածների առկայությանը.

9) ամփոփում է հետազոտությունների արդյունքները, որոշում է դրանց կիրառության ոլորտները, այդ թվում՝ հանրայնացման տեսանկյունից.

10) առաջնորդում և ղեկավարում է գիտական ստորաբաժանման անձնակազմի գործունեությունը.

11) սահմանում և ղեկավարում է գործառնական և վարչական ընթացակարգերը, պլանավորում և ղեկավարում է ամենօրյա գործառույթները.

12) առաջարկում և հիմնավորում է գիտական հետազոտությունների նոր ուղղությունները, ներկայացնում է առաջարկություններ հետազոտական աշխատանքների նախագծերի և ծրագրերի վերաբերյալ, կազմակերպում է նախագծերի մշակումը և պատշաճ ներկայացումը.

13) ապահովում է ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, վերահսկում է ծախսերը, հայթայթում և կառավարում է լրացուցիչ ֆինանսները:

3.19 **Լաբորանտի կամ ճարտարագետի պաշտոնը կարող է զբաղեցնել այն անձը,** ով հանդիսանում է ՀԱԱՀ-ում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառների բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական՝ բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի ծրագրերով ուսումնառություն անցնող ուսանող կամ ավարտած մասնագետ:

3.20 Լաբորանտը կամ ճարտարագետը՝

1) մասնակցում է փորձերի, թեստերի և վերլուծությունների իրականացմանը, հետազոտական սարքերի շահագործմանը և վերանորոգմանը, չափումների գրանցմանը, հաշվարկների գծապատկերների և գրաֆիկների պատրաստմանը, տվյալների վերլուծությանը, վիճակագրական հարցումների և հարցազրույցների անցկացմանը.

2) գիտական թեմայի առանձին մասերի շրջանակներում գիտական և գիտատեխնիկական աջակցություն է ցուցաբերում գիտական թեմայի շրջանակներում կատարվող հետազոտություններին կամ մշակումներին՝ համաձայն ոլորտում գործող մեթոդաբանության.

3) աջակցություն է ցուցաբերում նոր տեխնոլոգիաների, արտադրանքի, ծառայությունների, համակարգերի, մեթոդների ստեղծմանը կամ դրանց կատարելագործման աշխատանքներին.

4) տիրապետում է գիտության համապատասխան ոլորտի անվտանգության կանոններին.

5) կատարում է տվյալ թեմայով գիտական և գիտատեխնիկական տեղեկատվության ուսումնասիրություն և հետազոտության իրեն հանձնարարված մասի վերաբերյալ կարողանում է իրականացնել առկա տեղեկատվության ամփոփում.

6) մասնակցում է գիտափորձերի, դաշտային հետազոտությունների կամ աշխատանքների իրականացմանը, կատարում է չափումներ, ուսումնասիրություններ, կազմում է վերջիններիս նկարագրությունները:

3.21 **Ավագ լաբորանտի կամ ավագ ճարտարագետի պաշտոնը կարող է զբաղեցնել այն անձը**, ով հանդիսանում է ՀԱԱՀ-ում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառների բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական՝ մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի (առնվազն 4-րդ կուրս) ծրագրերով ուսումնառություն անցնող ուսանող կամ ավարտած մասնագետ:

3.22 Ավագ լաբորանտը կամ ավագ ճարտարագետը՝

1) գիտական թեմայի առանձին մասերի շրջանակներում գիտական և գիտատեխնիկական աջակցություն է ցուցաբերում գիտական թեմայի շրջանակներում կատարվող հետազոտություններին կամ մշակումներին՝ համաձայն ոլորտում գործող մեթոդաբանության.

2) մասնակցում հետազոտական սարքերի շահագործմանը և վերանորոգմանը, չափումների գրանցմանը, հաշվարկների, գծապատկերների և գրաֆիկների պատրաստմանը, տվյալների վերլուծությանը, վիճակագրական հարցումների և հարցազրույցների անցկացմանը.

3) նախապատրաստում է նյութեր և սարքավորումներ գիտափորձերի, թեստերի և վերլուծությունների իրականացման համար.

4) տիրապետում է համապատասխան ոլորտի անվտանգության կանոններին.

5) կատարում է տվյալ թեմայով գիտական և գիտատեխնիկական տեղեկատվության ուսումնասիրություն և հետազոտության իրեն հանձնարարված մասի վերաբերյալ կարողանում է իրականացնել առկա տեղեկատվության ամփոփում.

6) մասնակցում է գիտափորձերի, դաշտային հետազոտությունների կամ աշխատանքների իրականացմանը և ճարտարագիտատեխնիկական աշխատանքներին, կատարում է չափումներ, ուսումնասիրություններ, կազմում է վերջիններիս նկարագրությունները.

7) նախապատրաստում է նյութեր և սարքավորումներ գիտափորձերի, թեստերի և վերլուծությունների իրականացման համար.

8) մասնակցություն է ունենում նոր տեխնոլոգիաների, արտադրանքի, ծառայությունների, համակարգերի, մեթոդների ստեղծմանը կամ դրանց կատարելագործմանը:

3.23 Սույն կարգի 3.2-րդ, 3.5-րդ, 3.7-րդ, 3.9-րդ, 3.11-րդ, 3.13-րդ, 3.15-րդ, 3.17-րդ և 3.19-րդ կետերում նշված ՄԳՇ-ում ընդգրկված հրապարակումների վերաբերյալ գործում են հետևյալ սահմանափակումները և հարաբերակցությունները՝

1) ՄԳՇ-ում ընդգրկված հրապարակումները պետք է ներառված լինեն գիտության ոլորտի կառավարման միասնական տեղեկատվական համակարգում.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ոչ լրիվ աշխատաժամանակի կիրառման դեպքում նախատեսված աշխատաժամանակի մինչև 75 տոկոս տևողությամբ աշխատողներին ՄԳՇ-ում ընդգրկված հրապարակումներին ներկայացված քանակական պահանջները պետք է բավարարվեն առնվազն 75 տոկոսով, ընդ որում, եթե ստացված թիվն ամբողջ չէ, ապա պետք է դիտարկվի հաջորդ ամբողջ թիվը, իսկ 75 տոկոսից բարձր տևողությամբ աշխատողներին ՄԳՇ-ում ընդգրկված հրապարակումներին ներկայացված քանակական պահանջները պետք է բավարարվեն 100 տոկոսով:

3.24 Առաջատար գիտաշխատողը պետք է լինի ՀԱԱՀ-ի հիմնական և տվյալ տարակարգում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված աշխատաժամանակի առնվազն 75 տոկոս տևողությամբ աշխատող:

3.25 Գլխավոր գիտաշխատողը, պատվավոր առաջատար գիտաշխատողը և պատվավոր գլխավոր գիտաշխատողը պետք է լինեն ՀԱԱՀ-ում տվյալ տարակարգերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված աշխատաժամանակի նորմալ տևողությամբ աշխատող:

3.26 Սույն կարգի 3.9-րդ և 3.11-րդ կետերի 6-րդ ենթակետերում նշված գիտական աստիճան ստացած անձի գիտական ղեկավար լինելը համարժեք է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից 20 000 000 դրամ ֆինանսական ծավալի գիտական դրամաշնորհի ղեկավար կամ համաղեկավար լինելուն:

Հավելված 1
Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի
գիտական և ճարտարագիտատեխնիկական աշխատողների ատեստավորման կանոնակարգի
(հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից
«28» հոկտեմբերի 2025թ.)

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Տարակարգը	Չափանիշներ					Հանդիսացել է՝
	Գիտական աստիճան, գիտական ստաժ, գիտական աշխատանքներ					
	Գիտական աստիճան, մասնագետի որակավորում, զբաղեցրած պաշտոն	Աշխատանքային ստաժ	Հրապարակումներ			
			Հեղինակ կամ համահեղինակու-թյուն	Առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ	Ամսագրերի դասակարգման քառորդ	
Կրտսեր գիտաշխատող	գիտական աստիճան կամ մագիստրոսի (դիպլոմավորված մասնագետի) որակավորում, դիպլոմը ստացել է առավելագույնը 20 տարի առաջ					
Գիտաշխատող	գիտական աստիճան կամ մագիստրոսի (դիպլոմավորված մասնագետի) որակավորում,	գիտական, գիտատեխնի-կական կամ գիտակրթական առնվազն 3 տարի	վերջին 5 տարիներին առնվազն 4 հրապարա-կում ՄԳՇ-ում			

Տարակարգը	Չափանիշներ					Հանդիսացել է՝
	Գիտական աստիճան, գիտական ստաժ, գիտական աշխատանքներ					
	Գիտական աստիճան, մասնագետի որակավորում, զբաղեցրած պաշտոն	Աշխատանքային ստաժ	Հրապարակումներ			
			Հեղինակ կամ համահեղինակություն	Առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ	Ամսագրերի դասակարգման քառորդ	
Ավագ գիտաշխատող	գիտական աստիճան	գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն 8 տարի	վերջին 5 տարիներին ՄԳՇ-ում 6 հրապարակման համահեղինակ	վերջին 5 տարիներին առնվազն 3-ում		
Առաջատար գիտաշխատող	գիտական աստիճան	գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն 13 տարի	վերջին 5 տարիներին ՄԳՇ-ում առնվազն 8 հրապարակման համահեղինակ	վերջին 5 տարիներին առնվազն 4-ում	վերջին 5 տարիներին առնվազն 4-ը Q2-ում	վերջին 5 տարիներին գիտական աստիճան ստացած առնվազն մեկ անձի ատենախոսության գիտական ղեկավար կամ առնվազն 20 մլն դրամ ընդհանուր ֆինանսական ծավալի գիտական դրամաշնորհի (դրամաշնորհների) ղեկավար կամ նախատեսված լինելու դեպքում՝ համաղեկավար
Գլխավոր գիտաշխատող	գիտական աստիճան	գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական 18 տարի	վերջին 5 տարիներին ՄԳՇ-ում առնվազն 16 հրապարակման համահեղինակ	վերջին 5 տարիներին առնվազն 8-ում	վերջին 5 տարիներին առնվազն 8-ը Q1-ում	վերջին 5 տարիներին գիտական աստիճան ստացած առնվազն 2 անձանց ատենախոսության գիտական ղեկավար

Տարակարգը	Չափանիշներ					Հանդիսացել է՝
	Գիտական աստիճան, գիտական ստաժ, գիտական աշխատանքներ					
	Գիտական աստիճան, մասնագետի որակավորում, զբաղեցրած պաշտոն	Աշխատանքային ստաժ	Հրապարակումներ			
			Հեղինակ կամ համահեղինակություն	Առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ	Ամսագրերի դասակարգման քառորդ	
						կամ առնվազն 40 մլն դրամ ընդհանուր ֆինանսական ծավալի գիտական դրամաշնորհի (դրամաշնորհների) ղեկավար կամ նախատեսված լինելու դեպքում՝ համաղեկավար, որից առնվազն 20 մլն դրամը ոչ ՀՀ պետական բյուջեի միջոցներից
Պատվավոր առաջատար գիտաշխատող	վերջին 10 տարիներին առնվազն 5 տարի առաջատար գիտաշխատող կամ գիտական ստորաբաժանման ղեկավար	տարիքային կենսաթոշակի իրավունք	վերջին 10 տարիներին ՄԳՇ-ում 14 (6-ը վերջին 5 տարիների ընթացքում) հրապարակման համահեղինակ	վերջին 10 տարիներին առնվազն 7-ում	վերջին 10 տարիներին առնվազն 7-ը առնվազն Q2-ում	
Պատվավոր գլխավոր գիտաշխատող	վերջին 10 տարիներին առնվազն 5 տարի	տարիքային կենսաթոշակի իրավունք	վերջին 10 տարիներին ՄԳՇ-ում 24 (8-ը վերջին	վերջին 10 տարիներին առնվազն 12-ում,	վերջին 10 տարիներին առնվազն 12-ը,	

Տարակարգը	Չափանիշներ					Հանդիսացել է՝
	Գիտական աստիճան, գիտական ստաժ, գիտական աշխատանքներ					
	Գիտական աստիճան, մասնագետի որակավորում, զբաղեցրած պաշտոն	Աշխատանքային ստաժ	Հրապարակումներ			
			Հեղինակ կամ համահեղինակություն	Առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ	Ամսագրերի դասակարգման քառորդ	
	գլխավոր գիտաշխատող կամ գիտական ստորաբաժանման ղեկավար		5 տարիների ընթացքում) հրապարակման համահեղինակ	որից 4-ում վերջին 5 տարիների ընթացքում	որից 4-ը վերջին 5 տարիների ընթացքում առնվազն Q1-ում	
Գիտական ստորաբաժանման ղեկավար	գիտական աստիճան	գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն 7 տարվա ստաժ	վերջին 5 տարիներին ՄԳՇ-ում 6 հրապարակման կամ առնվազն 2 մենագրության համահեղինակ	վերջին 5 տարիներին առնվազն 3-ում		
Լաբորանտ կամ ճարտարագետ	բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական՝ բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի ծրագրերով ուսումնառություն անցնող ուսանող կամ ավարտած մասնագետ					

Տարակարգը	Չափանիշներ					Հանդիսացել է՝
	Գիտական աստիճան, գիտական ստաժ, գիտական աշխատանքներ					
	Գիտական աստիճան, մասնագետի որակավորում, զբաղեցրած պաշտոն	Աշխատանքային ստաժ	Հրապարակումներ			
			Հեղինակ կամ համահեղինակություն	Առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ	Ամսագրերի դասակարգման քառորդ	
Ավագ լաբորանտ կամ ավագ ճարտարագետ	բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական՝ մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի (առնվազն 4-րդ կուրս) ծրագրերով ուսումնառություն անցնող ուսանող կամ ավարտած մասնագետ					

Հավելված 2
Հայաստանի ազգային ագրարային համալսարան
հիմնադրամի գիտական և ճարտարագիտատեխնիկական
աշխատողների ատեստավորման կանոնակարգի
(հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից
«28» Հոկտեմբերի 2025թ.)

ՑՈՒՑԱԿ

ՀԱԱՀ 20___ թվականի ատեստավորման ենթակա գիտական աշխատողների

Գիտական կազմակերպության (միավորի) անվանումը

---

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Գիտական պաշտոնը	Գիտական աստիճանը	Ստորաբաժանումը	Ատեստավորման ամիսը/օրը

Հավելված 3
Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի
գիտական և ճարտարագիտատեխնիկական
աշխատողների ատեստավորման կանոնակարգի
(հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից
«28» հոկտեմբերի 2025թ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Ես՝ _____

_____

(նշվում է անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը)

տեղեկացված եմ, որ մինչև 20----թ. ---------- -----ը Հայաստանի ազգային ագրարային համալսարանում (գտնվելու վայրը՝ ք. Երևան Տերյան 74) պետք է անցնեմ գիտական աշխատողի ատեստավորում:

Տեղեկացված եմ նաև, որ առանց հարգելի պատճառի հանձնաժողովի նիստին չներկայանալու դեպքում, ատեստավորման հանձնաժողովը կարող է ատեստավորումն անցկացնել իմ բացակայությամբ:

_____ / _____ / «____» _____ 20____ թ.
(անուն, ազգանուն, ստորագրություն)

_____/ _____/ «____» _____20____ թ.
(աշխատողին ծանոթացնողի անունը, ազգանունը և ստորագրությունը)

Հավելված 4
Հայաստանի ազգային ագրարային համալսարան
հիմնադրամի գիտական և ճարտարագիտատեխնիկական
աշխատողների ատեստավորման կանոնակարգի
(հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից
«28» հոկտեմբերի 2025թ.)

ՑԱՆԿ

ատեստավորվող գիտական աշխատողի կողմից որակավորման հանձնաժողովին ներկայացվող տեղեկատվական նյութերի

1. Անմիջական ղեկավարի կարծիքն իր մասին, այդ թվում, տարակարգի փոփոխության պարագայում՝ առաջարկվող տարակարգին համապատասխան որակական չափանիշներին համապատասխանության հիմնավորումները,
2. Ատեստավորման նախորդ գործընթացից հետո ընկած ժամանակահատվածում հրատարակված գիտական աշխատությունների ցանկը և գիտական գործունեությանը վերաբերող այլ տեղեկատվական նյութեր, որոնք վերցվում են գիտության ոլորտի կառավարման միասնական տեղեկատվական համակարգից,
3. Որակական չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր կամ այլ հավաստող տեղեկատվական նյութեր,
4. Նախորդ ատեստավորման թերթիկը (առկայության դեպքում),
5. Հերթական ատեստավորման թերթիկը՝ 2 օրինակից:

Հավելված 5
Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի
գիտական և ճարտարագիտատեխնիկական
աշխատողների ատեստավորման կանոնակարգի
(հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից
«28» Հոկտեմբերի 2025թ.)

ԱՆՄԻՋԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԾԻՔԸ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ատեստավորման ժամանակահատվածում (վերջին ____ տարի)

Աշխատակցի ա.ա.հ. _____

Գիտական կառույց, գիտական ստորաբաժանում _____

_____

_____

Զբաղեցրած պաշտոնը_____

Տվյալ պաշտոնը զբաղեցնելու ~~սկզբի~~ ամիս ամսաթիվը և տարին_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Ղեկավարի առաջարկը ատեստավորման հանձնաժողովին՝ աշխատակցի պաշտոնի վերաբերյալ

Գիտական ստորաբաժանման ղեկավար՝

_____ _____ _____
(պաշտոնը) (ստորագրություն) (ա.ա.հ.)
«_____»_____20_____ թ.

Հավելված 6
Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի
գիտական և ճարտարագիտատեխնիկական
աշխատողների ատեստավորման կանոնակարգի
(հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից
«28» հոկտեմբերի 2025թ.)

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ
որակավորման ժամանակահատվածում (վերջին ___ տարի)

Աշխատակցի ա.ա.հ. _____

Գիտական աստիճան._____

Գիտական կառույց, ստորաբաժանում._____

Պաշտոն ._____

Ներկա պաշտոնին նշանակման ամիս, ամսաթիվը և տարին_____

	Տարի, քանակ				
	2021	2022	2023	2024	2025
1. Գիտական աշխատություններ					

1.1. Հոդվածներ գրախոսվող հանդեսներում					
1.1.1. այդ թվում՝ ազդեցություն ունեցող գիտական պարբերական-ներում (Վեբ օֆ Սայնս (Web of ScienceTM) հարթակի հիմնական շտեմարանում կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում) տպագրված հոդվածներ (նշել քառորդը)					
1.2. Գլուխներ գրքերում (նշել հարթակը և քառորդը)					
1.3. Հոդվածներ գիտաժողովների նյութերում (նշել հարթակը և քառորդը)					
1.4. Այլ տպագրված գիտական հոդվածներ, հրատարակման փուլում գտնվող					
1.5. Արտոնագրեր					
1.6. Դասագրքեր, ձեռնարկներ					
1.7 Մեթոդական ցուցումներ					
2. Գիտական աշխատությունների ցուցակը՝ ըստ դասակարգման[1]					
1.1. Հոդվածներ գրախոսվող հանդեսներում					
...					
...					
1.1.1. այդ թվում՝ ազդեցություն ունեցող գիտական պարբերականներում (Վեբ օֆ Սայնս (Web of ScienceTM) հարթակի հիմնական շտեմարանում կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկա-տվական հարթակում) տպագրված հոդվածներ					
...					
...					
1.2. Գլուխներ գրքերում					
...					
...					

[1] Ցուցակում նշել ամեն նյութի լրիվ ելքային տվյալները, առկայության դեպքում քառորդը

1.3. Հոդվածներ գիտաժողովների նյութերում					
...					
...					
1.4. Այլ տպագրված գիտական հոդվածներ, հրատարակման փուլում գտնվող					
...					
...					
1.5. Արտոնագրեր					
...					
...					
1.6. Դասագրքեր, ձեռնարկներ					
...					
...					
1.7..Մեթոդական ցուցումներ					
...					
...					

Գիտական աշխատող՝

_____ _____ _____

(պաշտոնը) (ստորագրություն) (ա.ա.հ.)

Գիտական ստորաբաժանման ղեկավար՝

_____ _____ _____

(պաշտոնը) (ստորագրություն) (ա.ա.հ.)

«_____»_____20 թ.

Հավելված 7
Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի
գիտական և ճարտարագիտատեխնիկական
աշխատողների ատեստավորման կանոնակարգի
(հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից
«28» Հոկտեմբերի 2025թ.)

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

1. Ատեստավորվողի ա.ա.հ. .....
2. Զբաղեցրած պաշտոնը.....
   .....
3. Գիտական աշխատողի գործունեության գնահատական.
   - «Համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին» ☐
   - «Չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին» ☐
   - «Համապատասխանում է իր զբաղեցրած պաշտոնից ավելի բաձր պաշտոնի» ☐

Հավելված 8
Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի
գիտական և ճարտարագիտատեխնիկական
աշխատողների ատեստավորման կանոնակարգի
(հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից
«28» նոյեմբերի 2025թ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ_____

_____

(գիտական կառույցի, ստորաբաժանման անվանումը)

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԹԵՐԹԻԿ

1. Ազգանուն, անուն, հայրանուն _____

2. Ծննդյան տարեթիվ _____

3. Կրթությունը, մասնագիտությունը / որակավորումը _____

_____

4. Գիտական աստիճանը, կոչումը _____

5. Ընդհանուր աշխատանքային ստաժը ____ տարի, այդ թվում վերջին պաշտոնում՝ ____ տարի

6. Ատեստավորման պահին զբաղեցված պաշտոնը, նշանակման տարեթիվը _____

7. Աշխատակցի գործունեության գնահատականը. _____

_____

8. Ատեստավորման հանձնաժողովի որոշումը. _____

_____

(համապատասխանում է զբաղեցված պաշտոնին/չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին/համապատասխանում է իր զբաղեցրած պաշտոնից ավելի բարձր պաշտոնի)

Հանձնաժողովի քանակական կազմը՝ ___, նիստին ներկա՝ ___, որոշմանը կողմ՝ ___, դեմ՝ ___

9. Ատեստավորման հանձնաժողովի որոշման մեկնաբանությունը. _____

_____

Ատեստավորման հանձնաժողովի նախագահ՝ _____ _____

(ստորագրություն) (ա.ա.հ.)

Ատեստավորման հանձնաժողովի քարտուղար՝ _____ _____
(ստորագրություն) (ա.ա.հ.)

Ատեստավորման հանձնաժողովի անդամներ՝ _____ _____
(ստորագրություն) (ա.ա.հ.)

_____ _____
(ստորագրություն) (ա.ա.հ.)

_____ _____
(ստորագրություն) (ա.ա.հ.)

_____ _____
(ստորագրություն) (ա.ա.հ.)

_____ _____
(ստորագրություն) (ա.ա.հ.)

_____ _____
(ստորագրություն) (ա.ա.հ.)

_____ _____
(ստորագրություն) (ա.ա.հ.)

_____ _____
(ստորագրություն) (ա.ա.հ.)

_____ _____
(ստորագրություն) (ա.ա.հ.)

_____ _____
(ստորագրություն) (ա.ա.հ.)

Ատեստավորման ամսաթիվը. "_____"_____ 20___ թ.

Ատեստավորման թերթիկի հետ ծանոթացել եմ _____
(ատեստավորվող աշխատակցի ստորագրություն, ա.ա.հ., ամսաթիվ)

Հավելված 9
Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի
գիտական և ճարտարագիտատեխնիկական
աշխատողների ատեստավորման կանոնակարգի
(հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից
«28» Հոկտեմբերի 2025թ.)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ատեստավորման հանձնաժողովի

N _____ նիստի («___» _____ 20__ թ.)

Ներկա էին. (Ատեստավորման հանձնաժողովի նախագահի, քարտուղարի և նիստին ներկա անդամների ա.ա.հ. Ատեստավորման ենթակա աշխատակիցների գիտական ստորաբաժանումների ղեկավարների ա.ա.հ.

Օրակարգ. (նիստում ատեստավորվող գիտական աշխատողների ա.ա.հ.)

1. Լսեցին.

_____

(Ա.Ա.Հ., պաշտոն, գիտական ստորաբաժանում)

ատեստավորման գործի նյութերը

Հարցերը ատեստավորվողին և դրանց պատասխանները _____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Ատեստավորման հանձնաժողովի որոշումը.

Համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին ☐

Չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին ☐

Համապատասխանում է իր զբաղեցրած պաշտոնից ավելի բարձր պաշտոնի

☐ նշել պաշտոնը _____

Քվեարկության արդյունքները. ԿՈՂՄ՝ _____ , ԴԵՄ՝ _____

Ատեստավորման հանձնաժողովի որոշման մեկնաբանությունը (լրացվում է պաշտոնի փոփոխության առաջարկման դեպքում)

_____

_____

_____

_____

_____

Ատեստավորման հանձնաժողովի նախագահ՝ _____ _____

(ստորագրություն) (ա..ա..հ.)

Ատեստավորման հանձնաժողովի քարտուղար՝ _____ _____

(ստորագրություն) (ա..ա..հ.)